



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՈՆԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՈՒՄԱՆ
ԲԱՐԵՂԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

գ. Լեոնահովիտ

հեռ. _094-86-89-07

N 148

Էլ.փոստ lernakert-qeghar@schools.am

<< 26 >> ապրիլ 2021թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ.ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի մարտի 24-ին Լեոնահովիտ գյուղի Վ.Բարեղամյանի անվան հիմնական դպրոցում ինֆորմատիկայի ուսուցչի (շաբաթական՝ 4 դասաժամ) աշխատատեղի համար հայտարարվել էր մրցույթ, սակայն մրցույթը չի կայացել՝ հավակնորդ չլինելու պատճառով:

Ղեկավարվելով ՀՀ ԿԳ նախարարի 2021 թվականի փետրվարի 18-ի N 22-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի» 11-րդ և 5-րդ կետերի պահանջներով՝ տեղեկացնում եմ, որ վեր նշված թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար հայտարարվել է նոր մրցույթ:

Հանտարարությունը հրապարակվել է կրթություն շաբաթաթերթի (21.04.2021) թիվ 16-17(989-990) համարում:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը:

Հարգանքով՝

Դպրոցի տնօրենի Ժ/Պ՝ / Ս.Մխիթարյան/

Digitally signed by MKHITARYAN
SPARTAK 2714630391
Date: 2021.04.26 11:19:13 GST

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտ գյուղի Վ. Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ինֆորմատիկայի ուսուցչի (4 դասաժամ) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),

2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձնագիր,

4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5) աշխատանքային գրքույկ,

6) ինքնակենսագրություն (Ձև 4),

7) մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,

8) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

9) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,

10) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),

11) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը, փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մայիսի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա մայիսի 6-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վ. Բարեղամյանի անվան հիմնական դպրոցում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լեռնահովիտ, փողոց 1, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել 094 86-89-07 հեռախոսահամարով: